

ծերը ունին արտակարգ ու հիանալի ընդարձակություն, ձեռքերը հարստություն: Իր լեզուն եւ ոճը ունի գիտություն ճշգրտություն: Իր բանաստեղծության ներշնչումները հորիզոնը ունի Leonardo da Vinci-ի գիտական հանձարին տիեզերական տարածությունը:

Շատ քիչ գրագետներ սիրած են մեր անցեալը՝ ինչպէս սիրած է Ալիշան:

Ալիշանի ամբողջ գործը սրտաբուխ ազդեց մըն է առ բնաշխարհ, վերածուած տխուր անապատի մը, ուր ինք անդադար ման կու գար հին աշուղներու նման, եւ իր հովուերգութիւնները կը շարադրէր, մեղմացնելու համար իր յուզումը ու կարօտը, դէպի այն երազներու աշխարհ:

Հայաստան Ալիշանի միակ մտերիմ էակն էր, իր ջանքերուն եւ յոգնութիւններուն միակ հանգստարանը, իր մարդկային վիշտերուն ու թախիծներուն մը-խիթարութիւնը:

Ալիշանի քնարը հազար թելերով էր շինուած: Իր բանաստեղծական շունչը սահման չունէր: Նա միեւնոյն ատեն աշուղ էր եւ գիւցաղներգակ. նա միեւնոյն ատեն Վարդանն էր եւ Ղեւոնդ Երէցը:

Հայ աշխարհի հոգն ու երկինքը, գիրն ու պատմութիւնը՝ իր գործերուն հիւսուածքը կը կազմեն: Անոր կանխահաս գարունները, խիստ ձմեռները, երկար աշունները եւ բարեխառն ամառները, անոր ձիւնազարդ լեռները, ծաղկաւետ պարտէզները, պտղատու դաշտերն ու այգիները Ալիշանի նուագին լարերը յուզող երանութիւններն էին:

Հայաստանը Ալիշանի համար երկնքի ու երկրի ժպիտն էր, որուն լոյսերուն մէջ կ'անցընէր հիացումի ու արբեցութեան ժամերը:

Ասոնք են Ալիշան բանաստեղծին ներշնչումը, ամէնէն յստակ աղբիւրները. ուր դառնութիւնը, հայրենի կարօտը ու անցեալի տեսիլը իր հոգիին մէջ կը ըստեղծեն մոգական խմորում մը: Այն ատենն է որ միտքը տեղի կու տայ սրտին. խօսքը ներշնչումներուն, եւ իր կուրծքին

ներքեւ կ'երգէ անտեսանելի հրեշտակը, կը դիւթէ ու կը հրապուրէ մեր հոգիները:

* * *

Ալիշանի կեանքը չի ներկայացներ աշխարհիկ արկածախնդիր դէպքեր. եւ սակայն եթէ հոգեկան արկածախնդրութիւնները կ'արժեն զոնէ միւսներուն չափ, պէտք է ըսել որ ոչ մէկ կեանք այնքան արկածախնդիր եղած է՝ որքան այս համեստ կրօնաւորին կեանքը, որ փակուած իր խցիկին մէջ՝ կը ճամբորդէր ուխտաւորի քայլերով, որոնք եւ յայտնարբեր իր ժողովուրդին աւանդութիւնները ու կորսուած աշխարհի մը պատմական վկայութիւնները:

Երբ Ալիշան իր գրասեղանին առաջ նստած կը գրէր անդադար, խորասուզուած իր հոգիներուն եւ յուշերուն մէջ, նա պատկերն էր Արարատին:

Իր երկար մազերը, իր երկար մօրուքը, իր դէմքին ու ճակատին երկար ափսոսները, իր երկար զգեստները՝ Արաքսի խռոված ալիքներուն տխուր պատկերը կը նկարէին իր անձին շուրջ, որուն ջուրերուն մէջ՝ կարծես՝ իր նիհար մարմինը խեղդուէր:

Այն անպաճոյճ խցիկին մէջ, այն թուղթերուն ետին է որ մենք կը տեսնենք Ալիշանի կրակի ու շուքի հակայական անձնաւորութիւնը, յառած իր միտքը դէպի այն երկիրը ու այն երկինքը՝ ուր կը բնակէին իր սուրբերը, իր հերոսները, իր մարտիրոսները, ուր հայ մտքի, խղճի եւ հաւատքի հրեշտակապետները՝ Լուսաւորիչէն մինչեւ Շնորհալին, Եղիշէն մինչեւ Մխիթար, կրօնքի ու ազատութեան սուրբ կանթեղը վառ պահեցին, որպէսզի մենք պղտիկ մարդիկս չվախնանք մութէն ու անապատէն:

Ալիշան բախտը եւ երջանկութիւնը չունեցաւ Հայաստան այցելելու, իրեն արգելուած էր իր հայրենի հոգին վրայ ոտք դնել, որովհետեւ այն հայրենասէր ծերուկը շատ ստէպ կը կրկնէր Հայաստանի անունը, որովհետեւ այդ մենակեաց ու-

ղեւորին պայուսակը վտանգաւոր ական մըն էր՝ որ բռնակալներու հանդիստ քունը կը վրդովէր:

Եւ սակայն եթէ իր աչքերը կապուած մնացին եւ ոտքերը չլթալուած, ոչ ոք կարող էր կաշկանդել անոր արծուական թռիչքը: Իր գուշակող միտքը լուսնի շողերուն նման իջաւ հայրենի ակունքներէն ներս, տեսաւ ու խօսեցաւ, սիրտը ձեռքերուն մէջ, իր ժողովուրդին հետ, ու պատմեց անոր հին օրերուն հէքեաթը, անոր առասպելական անցեալը:

Ալիշանի հայրենաշունչ քերթուածներն են որ սարսեցին ու գրաւեցին մեր անցեալ դարու սերունդները ու անոնց նստողական համբերատար կեանքին անսահման խեղճութեան վրայ սիւնեցին ինքնաճանաչութեան առաջին շողերը, յեղափոխական շարժումներու առաջին կայծերը վառեցին Տարօնի ու Վասպուրականի լեռներուն վրայ, երբ մեր անդրանիկ եղբայրները յուսահատական կռիւներ կը մղէին՝ վերստին ձեռք բերելու կորսուած ճակատագիրը:

Մեր ներկայ պատմութեան մէջ Հայ յայտուն դէպք մը՝ որ ծնունդ տուած չըլլայ ժողովրդական երգերու ու քայլերգներու, ներշնչուած մեր ազատագրութեան կռիւներու հերոսական ու ոռմանթիքը գրուագներէն:

Մեր աշուղներուն հոգիները երգ դարձան՝ անմահացնելու համար վտանգները, բախտն ու դժբախտութիւնը մեր անձնուրաց հերոսներուն խանդավառ ձեռնարկներուն:

Երազներու այս մթնոլորտին մէջն էր որ մենք պատանիներս եւ ամբողջ հայ ժողովուրդը, ազատութեան կաշկանդութիւններուն, ձեռքերը բերանին, խեղդուկ ծայրով, ճնշուած խանդով, մեր տուններուն մէջ, մեր վարժարաններէն ներս, գաղտնի կ'երգէինք Ալիշանի «Բամ. փոքրատան»ը, երբ գիտէինք որ կռիւի դաշտերուն վրայ նա կը հնչէր որպէս հին չեփորներու հայրենավրէժ մարտակոչ:

Ալիշան զպրոց մըն էր հայրենասիրու-

թեան: Այս լոյսին տակ նա եղաւ իր ազգին ամէնէն մեծ զաւակներէն մէկը:

Տասնըիններորդ դարուն մեր գրական աշխարհին հեղինակներուն մէջ նա ստեղծեց շարժում մը, որ եղաւ տեսակ մը դադարաւորական հնոց, ուր ձեռք ու մարմին ստացաւ սերունդի մը ոգին, եւ որ պահ մը իր նուաճումին տակ պահեց մինչեւ իսկ Պոլիսը, մինչեւ իսկ Կովկասը հեռաւոր:

Մեր սարերուն եւ հովիտներուն վրայ արձագանգեց իր կղզեակին վանական լռութենէն թռիչք առնող «Պալաւն Աւարայրի»ն, արիւն ու աւիւն ներմուծելով Տալուրիկի, Զէյթունի ու Սասնոյ անսասն հերոսներուն:

Մեր մայրերն ու կուսական քոյրերը իրեն «Շուշանն շաւարշանի» պատուի ու սրբութեան պահպան հրեշտակները եղան հայրենի ակունքներուն:

Հազար ու հազար տաճարներու եւ պալատներու մարմարեայ քարերով քանդակուած աստուածաշունչ արձանը «Յուշիկ հայրենեաց հայոց», իր հովերուն ու ջուրերուն մրմունջով մինչեւ այսօր կը պատմէ ճամբորդին եւ ուխտաւորին՝ Հայկի գիւցաղական մենամարտը, վարդանանց աստուածային զոհաբերութիւնը եւ քրիստոնէական յաղթանակը, Զուարթնոցի եւ Անիի գեղեցկութիւնները, որ էին ու կը մնան յուշարձաններ քրիստոնեայ աշխարհին, հասարակաց կալուածներ ու անփոխարինելի հարստութիւններ մարդկային ընտանիքին, որոնց վրայ «Լուսնկայն գերեզմանաց Հայոց» կը հսկէ որպէս երկնային կանթեղ իր յաւիտենական լոյսով, որպէսզի մարդիկ տեսնեն զանոնք, խորհրդածեն անոնց վրայ պատմութեան աչքով, իրաւունքի եւ արդարութեան Աստուծոյ սուրբ օրէնքներով:

Հայրենասիրական զգացումներու բովբեմըն է ամբողջ «Հայոց Աշխարհիկ»ը, ուր Նահապետը՝ հայ հոգին ու ցեղին համայն պատմութիւնն ու փառքը հիւսել է ետք՝

իր խօսքը արդի սերունդին ուղղելով, իր
բերեւ իմաստուն պապիկ մը, կը գոչէ.

Այ մանկաիք, եկէք շուրջ Նահապետիս...

Մանկաիք, զիս Հայոց հողն ու ջուր սնուցել,
եւ այն հողն ու ջուր սրտով եմ սիրել,
Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անոյշ,
Քանց օտար վարդ՝ քաղցր է հայրենեաց փուշ.

Ձեզ կ'ասեմ մանկունք, սիրունք, նազելիք,
Որոց է բնական Հայոց աշխարհիկ.
Մ'ուրանայք զերկիրդ ու զազգըդ սիրուն,
Ծառն՝ արմատով ծառ, տունն՝ հիմամբ է տուն:

Ալիշան անմահացուց մեր նախահայրե-
րու մտքի ու հանճարի անսահման չը-
նորհները, անոնց շինարար արդիւնքնե-
րը: «Հայ հանգար»-ի ոսկեղենիկ պատգա-
մով նա կնքեց անոնց յաջորդող սերունդ-
ներուն վրայ ունեցած իր անսահման հա-
ւատքն ու վստահութիւնը, որ եղաւ նախ-
երգանքը, ու մեր բնաշխարհի այսօրուան
իրականութեան մարգարէական տեսիլքը:

Ալիշան մեծ ըրաւ Հայաստանը:

Հայաստան մեծ ըրաւ Ալիշանը:

ՄԱՆՈՒԿ ԽԱՆՊԵՅԵԱՆ



Վկայական «Պատույ անդամակցութեան», Իտալիոյ Ասիական Ընկերութեան կողմէ տրուած
Հ. Ալիշանին, 1887 Յուլիս 1 քուակառով. (ԳԻԻԱՆ Ս. ՂԱԶԱՐՈՒ):

ՆԱՀԱՊԵՏԻՆ ՎԻՇՏԸ

ԱԼԻՇԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Անցեալի թանձր վարագոյրը կ'անօրա-
նայ, կը ցրուին մոռալ ամպերը եւ պայ-
ծառ հորիզոնին վրայ անգամ մըն ալ կը
Ժպտի՝ զերդ արշալոյս մը դեւթական՝
ամէնուս ծանօթ ու սիրելի դէմքը Հ. Ա-
լիշանի. ու մինչ ազդովին կ'ողջունենք
լիշանի. ու մինչ ազդովին կ'ողջունենք
այսօր այդ դէմքը լուսաշող, հաճելի է
ինձի նշմարել հոն, ստուերի մէջ, խոր-
հրդաւոր կէտ մը՝ ուր կարծես չեն թա-
փանցեր արեւի շողեր: Ալիշանի սիրտն է
ատիկա:

Կէս դարէ աւելի Հ. Ալիշան փայլած է
արուեստակի նման՝ հայ երկնակամարին
վրայ. բայց իր սիրտը շատերուն համար
մնացած է անծանօթ. անծանօթ՝ իր ա-
պրումներով եւ խոկումներով, խորհրդ-
աւոր ուկեան մը՝ իր կեանքի փոթոր-
կումներով: Ու բնական տենչ մը կը մղէ
մեզ անոր բանաստեղծական գրութիւննե-
րու համառօտ ուսումնասիրութեամբ՝
քիչ մը աւելի ծանօթանալ անոր հոգիին
ծալքերուն: Բայց միթէ բանաստեղծա-
կան գրութիւններէն կարելի՞ է ծանօթա-
նալ մարդու մը ներքին ապրումներուն,
բանաստեղծութիւնը կրնա՞յ մեզի հոգիի
մը պատմութիւնը ընծայել. այո՛, որով-
հետեւ բանաստեղծութիւնը վերացական
բառ մը չէ, եւ ոչ ալ գոյներու լոկ նկա-
րագրութիւն մը. ան կեանք է եւ ապրե-
լած իրականութիւն մը. հոգիէ մը բխած
բանաստեղծութիւնը այդ հոգիին ապրած
կեանքի արտայայտութիւնն է: Բանաս-
տեղծութիւնը իր այս իսկական իմաստով
կ'իրականանայ Նահապետին գործերուն
մէջ, որոնք գրեթէ ամբողջապէս Նուագ-
ներուն մէջ կ'ամփոփուին: Էջեր՝ ուր տա-
կաւին ջերմ արցունքներ կը շողան, դեռ
կարօտի երգեր կը հնչեն եւ ազօթքի
մըմունջներ: Նուագները Նահապետին ա-
պրումներն են, հոգեվիճակները, յոյսե-

րուն երգը, նուազկոտ Ժպիտը, ցաւին ու
վշտին ճիւղ. հոն կը կուտակուին ալիք-
ներ, կը լեռնանան, կը դուռնան, կը մոռնան
ու կը փչրուին յանկարծ ծովափին մօտ,
այնպիսի յուզիչ երգով ու ողբով՝ որ
սրտերը կը լացնեն: Աւելորդ է փնտռել
Նուագներուն մէջ Ժպիտներու տեւական
ճառագայթներ եւ հրճուանքի շողեր. Ա-
լիշանի սիրտը պանդուխտի սիրտ է. ցա-
ւով, տառապանքով, կարօտով, լուռ
վիշտերով առկուռ: Յաւը Ալիշանի մէջ
անցողակի պահ մը չէ, այլ զգացում,
երկայն Ժամանակ պահում, ապրում
ցաւ մըն է, եւ դուցէ այս ցաւն է որ ա-
ռաջնորդած է զինքը փառքի կատարնե-
րուն. որովհետեւ եթէ ուրախութեան ու
հրճուանքի պահերը կը բարձրացնեն
մարդու սիրտը, ցաւն է որ կը թափան-
ցէ մեր էութեան խորը, կը ճանչցնէ
կեանքի իրականութիւնը՝ իր զանազան
ծալքերուն մէջ:

Ալիշան իր քերթումներուն մէջ կը
յայտնաբերէ բնութեան երանգներն ու
ձայները սիրող հոգի մը, ծովուն կոհակ-
ներու արձագանգէն յուզուող սիրտ մը:
Իր առաջին գրութիւններն արդէն ուրիշ
բան չեն՝ եթէ ոչ բնութեան պատկերներ,
ուր աւելի նկարագրութիւն կայ՝ քան ապ-
րում. իրապէս «Բնունի»-ի առաջին ոտա-
ւորներուն մէջ կը պակսի խորութիւ-
նը, կը պակսի այն հոգին, այն շունչը, որ
պիտի յայտնուի ապագայ քերթումնե-
րուն մէջ: Վերջալոյսի շողեր իրեն կը յի-
շեցնեն կեանքին ալ յետին վայրկեանը,
արուեստակը առիթը կ'ընծայէ խոկալու իր
անձին մասին. բայց ատիկա պահ մըն է
միայն, փոքրիկ կայծ մը՝ որ կը մարի
առանց հրդեհելու հեղինակին հոգին:
Կեանքի ծալքերուն եւ դաւադրանքներուն
անծանօթ սիրտ մըն է, որ կը նայի շուր-